ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հ/Հ	Միջոցառումը	Ակնկալվող անմիջական արդյունք	Ժամկետը	Կատարման ընթացքը
ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ (մինչև 2035 թվականը)				
Ռազմավարական նպատակ 1. Երկրաբանական միասնական թվային տեղեկատվական շտեմարանի ստեղծում և վարում				
Թիրախային ուղղություն 1.1. Առկա երկրաբանական տեղեկատվության կոնսոլիդացում և երկրաբանական միասնական թվային տեղեկատվական շտեմարանի (այսուհետ՝ Շտեմարան) ստեղծում և վարում՝ հանքավայրերի և հանքերևակումների պետական կադաստրի, պաշարների պետական հաշվեկշռի և պաշարների տարեկան շարժի առցանց արտացոլմամբ				
1.	2. Ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի հորատանցքերի և աղբյուրների գույքագրում	Հանքային ջրերի հորատանցքերի, աղբյուրների վիճակի, ջրերի ծախսի, սանիտարական վիճակի, սանիտարական պահպանության խիստ ռեժիմի գոտու, ջրերի որակի, օգտագործման պիտանելիության վերաբերյալ հավաստի տվյալների առկայության ապահովում. - հանքային ջրերի հանքավայրերի շուրջ 100 գույքագրված հորատանցքեր և աղբյուրներ: - գույքագրված հորատանցքերի և աղբյուրների	2023 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Աշխատանքը կատարվել է ՀՀ ՏԿԵՆ «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող ՀՀ 2023 թվականի պետական բյուջեով նախատեսված ՄԺԾԾ 040401 գործառնական դասակարգմամբ 1073 ծրագրի 11003 «Ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի ջրակետերի (հորատանցք, աղբյուր) գույքագրում» միջոցառման շրջանակներում: Ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի ջրակետերի գույքագրման և տեխնիկական վիճակի ուսումնասիրման նպատակով դաշտային այցելությունների ընթացքում հանքավայրերում իրականացվել են 164 ջրակետերի՝ 141 հորատանցքերի և 23 աղբյուրների չափագրման և ջրակետերի տեխնիկական վիճակի ուսումնասիրման, 35 տարբեր ջրակետերից ջրի նմուշառման և վերցված նմուշների լաբորատոր հետազոտության աշխատանքներ: Իրականացված աշխատանքների վերաբերյալ կազմված հաշվետվությունը ընդունվել և հաշվառվել է Հանրապետական երկրաբանական ֆոնդում:

		էլեկտրոնային բազայի առկայություն:		
Ռազմավարական նպատակ 2. Ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում արդյունավետ որոշումների կայացում				
Թիրախային ուղղություն 2.2. Ֆինանսական, սոցիալ-տնտեսական և շրջակա միջավայրի պահպանության հավասարակշռության ապահովում				
3. Շրջակա միջավայրի պահպանություն, 3.1 Շրջակա միջավայրի պահպանություն և կառավարում				
2.	4. ՀՀ Կառավարության 29.07.2016 թ. նիստի N 29 արձանագրային որոշման հավելված 2-ի Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման իրավունքներ հայցելու համար ներկայացվող շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման հաշվետվության կազմման ուղեցույցով սահմանված դրույթներին, ինչպես նաև հիմք ընդունելով միջազգային լավագույն փորձը, տալ պարտադիր կիրառման իրավական ակտի կարգավիճակ՝ հստակեցնելով արձանագրային որոշման մեջ նկարագրված մոտեցումները	Շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման համապարփակ հաշվետվություններ և հաշվետվությունների կազմման ընթացքում հանքարդյունահանող ընկերությունների հայեցողական մոտեցման նվազեցում 90%-ով	2023 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Շրջակա միջավայրի նախարարի 2022 թվականի հոկտեմբերի 25-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դրույթների կիրարկման ուղեցույցները հաստատելու մասին» N 369-Ն հրամանով հաստատվել են հետևյալ ուղեցույցները. 1. օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման իրավունքներ հայցելու համար ներկայացվող շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի կազմման, 2. օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման իրավունքներ հայցելու համար ներկայացվող շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման հաշվետվության կազմման, 3. հանքի փակման ծրագրի կազմման, 4. օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման իրավունքներ հայցելու համար ներկայացվող շրջակա միջավայրի վրա գումարային ազդեցության գնահատման հաշվետվության կազմման, 5. օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման իրավունքներ հայցելու համար ներկայացվող սոցիալ-տնտեսական ազդեցության գնահատման հաշվետվության կազմման,

				6. օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման իրավունքներ հայցելու համար ներկայացվող շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման հաշվետվության լիարժեքության գնահատման: